

ԲԱՅՐՈՆԸ ԵՒ ԱԼԻԾԱՆԸ

ԺԹ. դարի եւրոպացի բանաստեղծներից ոչ մէկն իր ժամանակակիցների վրայ չի ունեցել այնպիսի մեծ ազդեցութիւն, ինչպէս Բայրոնը: ԺԹ. դարում բայրոնիզմը՝ որպէս հզօր ուժ՝ ազատութեան, կենսասիրութեան, անհոգութեան ու սիրոյ գովքով՝ իր ոլորտի մէջ էր ներառել Արեւմուտքի եւ Արեւելքի տարբեր լեզուներով ստեղծագործող բանաստեղծներին (Ալֆրեդ դը Միւսէ, Հայնրիխ Հայնէ, Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Ադամ Միցկեւիչ, Շանդոր Պետեֆի եւ ուրիշներ), ինչպէս նաեւ ոգեշնչել արուեստագէտներին (Էօթէն Դելակրուա՝ «Յունաստանը Միսսօլունգիի փլատակների վրայ» (1826), «Սարդանապալի մահը» (1827), «Դոժ Մարիմոյ Ֆալբերոյի մահապատիժը» (1827), «Աքիդոսի հարսնացուն» (ըստ Բայրոնի պօէմի, 1843), Դոմենիկոյ Մօրելլի՝ «Կոմս Լարա» (1861), Հեկտոր (Հեկտոր) Բեռլիոզ՝ սիմֆոնիա «Հարուղը Խտալիայում» (1834), Զուգեպպէ Վերդի՝ օպերաներ «Երկու Ֆոսկարի» (1844) եւ «Ծովահեմը» (1848), Ռոբերտ Շուման՝ «Մանֆրեդ» (նախերգանք (ուվերտիւրա) Բայրոնի դրամատիկական պօէմի համար, 1848), Ադոլֆ Ադան՝ բալետ «Ծովահեմը» (1856), Պետր Չայկովսկի՝ սիմֆոնիա «Մանֆրեդ» (1885), եւ ուրիշներ): Հետեւաբար, միանգամայն իրաւացի էր Ա. Պուշկինը, երբ 1824-ին գրած «Ծովին»¹ բանաստեղծութեան մէջ արձանագրում էր, որ Բայրոնի մահով «Թուաւ մեզանից մի ուրիշ հանճար, // Մի այլ տիրակալ մեր հոգիների: // <...> // Կեանքը դատարկուեց...»²:

1 Ինչպէս նշել է Պուշկինը՝ 1824-ի հոկտեմբերին ռուս քանաստեղծ, գրաֆնադատ, հրապարակախօս իշխան Պետր Անդրեւիչ Վեպեմսկուն (1792-1878) հասցեագրած մի նամակում, Բայրոնի հոգու հանգստութեան համար ուղարկում է մի փոքրիկ յիշատակ՝ «Ծովին» քանաստեղծութիւնը (տե՛ս ПУШКИН, А. С., *Собрание сочинений в десяти томах*, т. IX, Москва, Издательство "Правда", 1981, 145-146, 422):

2 ՊՈՒՇԿԻՆ, Ա. Ս., *Երկեր*, հիմգ հատորով, հատոր I. «Բանաստեղծութիւններ», Հայպետհրատ, Երեւան 1954, 258-259 (թարգմ. Ն. Զարեան), քննադրը՝ ПУШКИН, А. С., *Собрание сочинений* ..., т. II, 13-14:

Նման գալթակղուծիւնից՝ Բայրոնի անմիջական ազդեցութիւնից, չեն խուսափել նաեւ հայ բանաստեղծները: Չնայած հայ-անգլիական գրական առնչութիւնները ծաւալուել են դեռեւս ԺԸ դարի երկրորդ կէսից (հնդկահայ գաղթօջախում), սակայն դրանք ԺԹ դարասկզբից, շնորհիւ Բայրոնի, ում ստեղծագործութիւնն ու անձնական ճակատագիրն առանձնայատուկ ազդեցութիւն են ունեցել համաշխարհային գրականութեան վրայ, ստացան միանգամայն նոր որակ: Վստահաբար կարելի է ասել, որ սկսած ԺԹ դարի առաջին քառորդից Բայրոնը հայ գրականութեան մէջ թողել է իր «հետքը»՝ այնտեղ ունենալով իր «մշտական մերկայացուցիչը» կամ «մերկայացուցիչները»:

Յատկանշական է, որ բայրոնիզմը հայ գրականութեան մէջ ներթափանցել, տարածուել եւ զարգացել է տարիների, տասնամեակների ընթացքում՝ հարստանալով, խորանալով եւ ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ ու անուններ՝ Ղեւոնդ Ալիշան, Սմբատ Շահազիզ, Միքայէլ Նալբանդեան, Ռուբեն Որբերեան, Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան, Վահան Տէրեան, Սիւսաննի, Դանիէլ Վարուժան, Ռուբեն Սեւակ, Եղիշէ Ջաւենց, Հրաչեայ Յովհաննիսեան, Պարոյր Սեւակ, Վահագն Դաւթեան եւ շատ ուրիշներ, որոնք այս կամ այն չափով կրել են Բայրոնի ստեղծագործութեան ազդեցութիւնը, ինչպէս նաեւ ունեցել բազմաթիւ նմանութիւններ եւ ընդհանրութիւններ Բայրոնի կեանքի եւ ստեղծագործութեան հետ:

Անդրադառնալով հայ բանաստեղծ, պատմաբան, թարգմանիչ, Մխիթարեան միաբանութեան անդամ Ղեւոնդ Ալիշանի (Քերովբէ Պետրոս-Մարգարի Ալիշանեան, 1820-1901) ստեղծագործութեան վրայ Բայրոնի քնարերգութեան թողած ազդեցութեանը եւ նրա թարգմանութիւններին Բայրոնի ստեղծագործութիւններից:

Բայրոնի ռոմանտիզմը, նրա ազատասիրական գաղափարները մեծ ազդեցութիւն են թողել երիտասարդ Մխիթարեան վարդապետ Ղ. Ալիշանի վրայ, ով, ԺԹ դարի 50-60-ական թուականներին հակադրուելով իր նախորդներին՝ հայ գրականութեան մէջ ձեւաւորուած ու կարծրացած (հիմնականում Մխիթարեան միաբանութեան հեղինակների ջանքերով) դասականութեան (կլասիցիզմ) գրական-գեղագիտական ուղղութեան կարկառուն ներկայացուցիչներին (Ղուկաս Ինճիճեան (1758-1833), Մանուէլ Զախլախեան (1770-1835), Եղիա Թովմաճան (1777-1848), Արսէն Բագրատունի (1790-1866) եւ ուրիշներ), հանդէս եկաւ իր ինքնատիպ բանաստեղծութիւնների շարքով, որոնք սկսած 1847-ից տպագրուեցին «Բազմավէպ» հանդէսում, իսկ յետագայում ամփոփուե-

ցին «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքոյ (ընդամենը տասնմէկ բանաստեղծութիւն): Դրանով Ղ. Ալիշանը ԺԹ. դարի հայ քնարերգութեան մէջ, ինչպէս ժամանակին անգլիական յեղափոխական ռոմանտիզմի առաջին բանաստեղծ Բայրոնն անգլիական քնարերգութեան մէջ, նորութիւն ու թարմութիւն ներմուծեց եւ դարձաւ հայ գրականութեան մէջ գրական նոր ուղղութեան՝ ռոմանտիզմի սկզբնաւորողների եւ հիմնադիրների համաստեղծութեան կարկառուն ներկայացուցիչներից մէկը: Այդ առումով, միանգամայն հասկանալի է եւ օրինաչափ, որ սկսած 1840-ական թուականների կէսերից երիտասարդ վարդապետը հետաքրքրուում է Բայրոնի քնարերգութեամբ եւ թարգմանութիւններ կատարում նրա ստեղծագործութիւններին:

Ընդհանրապէս, շատ անգլիական բանաստեղծներ են թարգմանուել հայերէն, բայց Բայրոնը, թերեւս, անգլիացի միակ բանաստեղծն է, որ հայերի նկատմամբ ունեցած իր սիրոյ եւ յարգանքի համար միշտ յիշուում եւ արժանանում է բարձր գնահատականի հայ իրականութեան մէջ: Մխիթարեանները առաջիններից էին, որ անդրադարձել են Բայրոնին եւ նրա ստեղծագործութեանը: Բանաստեղծի բազմաթիւ ստեղծագործութիւններ եւ նրա մասին յօդուածներ տեղ են գտել Մխիթարեանների, հրատարակած գրքերում, ժողովածուներում եւ գրական հանդէսներում: Բայրոնի երկերը հայերէն թարգմանութեամբ հրատարակուել են աւելի քան հարիւր անգամ: Դրանք թարգմանել են քառասունից աւելի հայ գրողներ եւ թարգմանիչներ:

Ղեւոնդ Ալիշանը Բայրոնի ստեղծագործութիւնների առաջին թարգմանիչներից է (եթէ ոչ առաջինը): Այսպէս, «Բագմավէպ» կիսամանկ հայագիտական հանդէսի հիմնադրումից երեք տարի անց, դեռեւս 1846-ին, դրա էջերում հանդիպում ենք մի բանաստեղծութեան, որի ոչ հեղինակը, ոչ էլ թարգմանիչը նշուած չեն³: Առաջին իսկ ընթերցումից զգացւում է, որ դա մի հատուած է Բայրոնի «Չայդը Հարուդի ուխտագնացութիւնը» պոէմից, իսկ աւելի մանրամասն ուսումնասիրութիւնից պարզւում է, որ այդ բանաստեղծութիւնը վերոյիշեալ պոէմի չորրորդ նուագի 153-159 ին-

3 Տե՛ս Սուրբ Պետրոս 'ի Հռովմ, ի Բագմավէպ, 1846, № 16, 247-248: Ի դէպ, համաձայն Մխիթարեան միաբանութեան Կանոնադրութեան՝ միաբանութեան իւրաքանչիւր անդամ, անկախ իր կատարած գործից ու դիրքից, իրաւունք չունէր տարբերուելու միւսներից, ինչի հետեւանքով «Բագմավէպ»-ի հրատարակման առաջին տարիներին այնտեղ գետեղուած միւսերից ոչ մէկը ստորագրուած չէր:

նեակներն են՝ Ղ. Ալիշանի թարգմանություններ, որոնք աննշան փոփոխություններով ընդգրկուել են Մխիթարեանների յետագայ հրատարակություններում: Փաստօրէն, դա, ինչպէս նաեւ նոյն թուականին «Ազգասէր» շաբաթաթերթում տպագրուած Բայրոնի «Միայնակութիւն» (“Solitude”) բանաստեղծութեան թարգմանութիւնը⁴ (ի դէպ, այստեղ նոյնպէս չի նշուել ոչ հեղինակը, ոչ թարգմանիչը, բայց, ի տարբերութիւն առաջին բանաստեղծութեան, հայ մամուլում բազմիցս արձանագրուել է, որ Բայրոնի այդ բանաստեղծութիւնը թարգմանել է հայ գրող, թարգմանիչ եւ հրապարակախօս Մեսրոպ Դաւթի Թաղիադեանը (1803-1858)⁵), հայ մամուլում Բայրոնի ինքնուրոյն ստեղծագործութեան առաջին հրատարակությունն է (հայերէնից անգլերէն նրա որոշ թարգմանությունների նմոյշներ վարժությունների տեսքով ընդգրկուել են դեռեւս 1832-ին հրատարակուած «Հայերէն-անգլիերէն քերականութիւն» ձեռնարկում⁶), ընդ որում դրանցից որեւէ մէկին գերակայութիւն չենք կարող տալ, քանի որ թէ՛ «Բազմավէպի», թէ՛ «Ազգասէրի» այդ համարների վրայ նշուած է նոյն ամսաթիւը՝ «15 օգոստոսի»:

Մխիթարեաններն ընդհանրապէս մեծ տեղ էին տալիս թարգմանություններին: Մեր ունեցած տուեալներով⁷ Բայրոնի ստեղծագործություններից Ալիշանի կատարած թարգմանությունները տեղ են գտել միայն Մխիթարեան մամուլի էջերում: Այստեղ ժամանակագրական կարգով դիտարկենք Բայրոնի ստեղծագործությունների այն թարգմանությունները, որոնք պատկանում են Ալիշանի գրչին:

1852-ին Վենետիկում լոյս է տեսնում «Ծաղկաճաղ քերթողաց անգղիացւոց» ժողովածուն (անգլերէն եւ հայերէն)⁸, որտեղ, ի թիւս այլ ստեղծագործությունների, տեղ են գտնում նաեւ Բայրոնի որոշ ստեղծագործություններ: Ժողովածուում «Լորտ Պայրընի

4 Տե՛ս Միայնակութիւն, ի Ազգասէր (Կալկաթա), 1846, քիւ 53, 8:

5 Տե՛ս, օրինակ, ՇՏԻԿԵԱՆ, Ս. Ա., Հայ մեր գրականութեան ժամանակագրութիւն. 1801-1850, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակութիւն, Երեւան 1973, 286, ԹԱՂԻԴԱՅԵԱՆ, Մ. Դ., Գեղարուեստական երկեր, Հայպետհրատ, Երեւան 1965, 385:

6 Տե՛ս PASCHAL AUCHER, P., *A Grammar Armenian and English*, Venice, of St. Lazarus, 1832.

7 Բեֆաբեան, Ա., Բայրոնի երկերի հայերէն հրատարակութիւնները, ի «Կանթեղ» գիտական յօդուածների ժողովածու, «Աստղիկ» հրատ., Երեւան 2001, № 4, 178-193:

8 *Beauties of English Poets – Ծաղկաճաղ քերթողաց անգղիացւոց*, Venice, In the Island of S. Lazzaro, 1852.

Քերթուածք» խորագրով տեղ են գտել (բնագրով եւ հայերէն թարգմանութեամբ) «Կոտորած քանակին Սեմեֆերիմայ» (“The Destruction of Sennacherib”), «Ուղերձ առ Ովկիանոս» (“Address to the Ocean”), «Ի վադերլու» (“On Waterloo”), «Առ ժամանակ» (“To Time”), «Տաղ երգեալ ի շանթաճիգ մրբկի» (“Stanzas Composed During a Thunder-Storm”) եւ «Տաճար Ս. Պետրոսի» (“Church of St. Peter”) բանաստեղծութիւնները: Դրանցից առաջինը «Հրեական մեղեդիներ» շարքից է, իսկ երկրորդը, երրորդը եւ վերջինը հատուածներ են «Զայլոյ Հարովդի ուխտագնացութիւնը» պօէմից (համապատասխանաբար՝ չորրորդ, երրորդ եւ չորրորդ նուագներից), որը գրուած է սպենսերեան տներով իննեակներով⁹: Ցաւօք, այդ բանաստեղծութիւնների թարգմանիչները չեն նշուել: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ դրանք թարգմանել է Ղեւոնդ Ալիշանը: Դրանում համոզուելու համար բաւական է «Զայլոյ Հարովդի ուխտագնացութիւնը» պօէմի չորրորդ նուագի վերոյիշեալ երկու հատուածները՝ 178-184 («Ուղերձ առ Ովկիանոս») եւ 153-159 («Տաճար Ս. Պետրոսի») իննեակները համեմատել Մխիթարեանների յետագայ հրատարակութիւնների հետ, որտեղ գետեղուել են այդ հատուածները (ՃՀԸ-ՃՁԲ եւ ՃԾԳ-ՃԾԹ իննեակներ), եւ նշուել է թարգմանիչը՝ Ղ. Ալիշան: Պարզուժ է, որ չնայած յետագայ հրատարակութիւններում կան որոշ, հիմնականում խմբագրական բնոյթի, փոփոխութիւններ, թարգմանութեան կառուցուածքը, ոճը եւ արուեստն ընդհանուր առմամբ նոյն ձեւագիրն ունեն: Բացի դրանից, 1974-ին «Հայ ընտանիք» ամսագրում գետեղուած մի անստորագիր յօդուածից (հայերէն եւ անգլերէն)¹⁰ տեղեկանում ենք (մեր կարծիքով տեղեկութիւնը միանգամայն հաւաստի է), որ Ղ. Ալիշանը թարգմանել է Բայրոնի «Քանի մը քնարերգութիւններ, որոնք ամփոփուած են մէկ հատորի մէջ եւ լոյս տեսած՝ 1870-ին»¹¹: Այստեղ խօսքը “Lord Byron’s Armenian Exercises and Poetry” ժողովածուի¹² մասին է (նշուած յօդուածի անգլերէն տարբերակում բերուած է «մէկ հատորի մէջ ամփոփուած» նիւթերի, այդ թւում եւ բանաստեղծութիւնների լրիւ ցանկը), որի մէջ համարեա ամփոփոխ գետեղուած են «Ծաղ-

9 Անգլիացի քանաստեղծ Էդմոնդ Սպենսերը (1552-1599) տաղաչափութեան մէջ աւանդական ուրբեակի փոխարէն մտցրել է ինը տողանոց տուն:

10 Լորտ Պայրըն հայ գրականութեան մէջ (անտորագիր), «Հայ ընտանիք», 1974, № 11-12, 8-11:

11 Անդ, 8:

12 Տե՛ս Lord Byron’s Armenian Exercises and Poetry, Venice, In the Island of S. Lazzaro, 1870 and 1907 (in English and Armenian): Այս ժողովածուն վերադրատարակուել է 1907-ին:

կախաղ»ում ընդգրկուած Բայրոնի բոլոր (թուով՝ վեց) բանաստեղծութիւնները:

Շատ յաճախ նոյն ստեղծագործութիւնը թարգմանել են տարբեր հեղինակներ՝ թէ՛ Մխիթարեաններ, թէ՛ այլ թարգմանիչներ: Այսպէս, օրինակ, 1858-ին ծովին նուիրուած մի քանի բանաստեղծութիւնների շարքում «Բազմավէպում» լոյս է տեսնում մի հատուած «Չայլդ Հարուդի ուխտագնացութիւնը» պօէմի չորրորդ նուագից (178-184 իննեակները) «Առ Ովկիան» վերնագրով¹³, իսկ 1922-ին այդ հատուածը Հ. Մասեհեանի թարգմանութեամբ հրատարակուած է Վիեննայում լոյս տեսնող «Արեգ» գրական-գիտական ամսագրում «Ովկիանոսին» վերնագրով¹⁴: Առաջին թարգմանութեան մէջ, որտեղ չի նշուած թարգմանիչը, պահպանուել է բնագրի կառուցուածքը (իննեակները թարգմանութեան մէջ նոյնպէս մնացել են իննեակներ), իսկ երկրորդ թարգմանութեան մէջ այն խախտուել է (իննեակները հիմնականում թարգմանուել են 10-11 տողով, իսկ մէկական իննեակ նոյնիսկ 12 եւ 13 տողով): Առաջին թարգմանութիւնը պատկանում է Ղ. Ալիշանին: Դրանում մենք համոզուում ենք, երբ այն համեմատում ենք Ղ. Ալիշանի թարգմանութեամբ «Չայլդ Հարուդի ուխտագնացութիւնը» պօէմի չորրորդ նուագի յետագայ հրատարակութիւններում¹⁵ գետեղուած համապատասխան հատուածի հետ: Համեմատութիւնից պարզում է, որ պօէմի չորրորդ նուագի առանձին գրքով լոյս տեսած տարբերակում կան չնչին, շատ աննշան փոփոխութիւններ եւ շտկումներ: Այսպէս, օրինակ, 1858-ի հրատարակութեան մէջ 178-րդ իննեակի առաջին տողում բերուած «անտառ անմարդաձայն եւ անկոխ» արտայայտութիւնը 1860-ի հրատարակութեան մէջ փոխարինուել է «անտառ անմանապարհ եւ անկոխ» արտայայտութեամբ, որը, նախ, աւելի լաւ է հնչում հայերէն եւ, երկրորդ, աւելի մօտ է բնագրին (անգլերէն՝ pathless woods): Այնուհերեւ, 182-րդ իննեակի «Եւ բընաբար գահ իւրեանց արկանէին թագազարդ» // Յեկաց խրժից եւ ստըրկաց նըւանեցան ափունքն այն» երկտող փոխարինուել է «Որպէս յետոյ արկին անդ բընաւորաց ձեռք աղարտ: // Ափունքն այն խուժք եւ սըտրուկք նըւանեցան յօտարաց» երկտո-

13 ԲԱՅՐՈՆ, *Առ Ովկիան*, ի *Բազմավէպ*, 1858, № 6, 173-174:

14 Տե՛ս «Ովկիանոսին. Բայրոնի «Չայլդ Հարուդից», Թարգմ. Յովհաննէս Մատենեան, «Արեգ», Բիւ 5, 287-289:

15 ԲԱՅՐՈՆ, «Խտայիա» (Չայլդ Հարուդի ուխտագնացութիւնը պօէմի չորրորդ երգը), Թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860, 1889, 1891, 1901 (անգլերէն և հայերէն):

ղով, որն արտայայտելով նոյն միտքը, կարծես, հնչում է աւելի անկաշկանդ (անգլերէն՝ And many a tyrant since; their shores obey // The stranger, slave, or savage; their decay), եւ այդպիսի մի քանի ոչ հական փոփոխութիւններ եւս: Դա միանգամայն բնական է եւ բացատրելի, քանի որ այնպիսի մի քնարերգու, ինչպիսին էր Ղ. Ալիշանը, նոր այն էլ պօէմի մի ամբողջ նուագի, հրատարակութեան ժամանակ չէր կարող չանդրադառնալ թէկուզ իր իսկ թարգմանութեանը եւ կատարել որոշ յղկումներ, խմբագրական ուղղումներ եւ շտկումներ: Միաժամանակ նշենք, որ «Զայլդ Հարուդի ուխտագնացութիւնը» պօէմն ամբողջութեամբ հայերէն հրատարակուել է միայն 1965-ին՝ Հենրիկ Սեւանի թարգմանութեամբ¹⁶, որտեղ թարգմանիչը նոյնպէս պահպանել է հեղինակի ընտրած կառուցուածքը՝ իննեակները:

1860-ին Վենետիկում լոյս է տեսել Բայրոնի «Զայլդ Հարուդի ուխտագնացութիւնը» պօէմի չորրորդ երգը՝ «Իտալիա» վերնագրով (անգլերէն եւ հայերէն)¹⁷: Պօէմի այդ նուագի թարգմանութիւնը կատարել է Բայրոնի հայ առաջին թարգմանիչներից մէկը՝ հայ նոր քնարերգութեան նահապետ Ղեւոնդ Ալիշանը, ով հիացել է Բայրոնով եւ մեծարել նրան՝ անուանելով ոչ միայն դարի նշանաւոր բանաստեղծ, «այլ եւ առաջին ի մոսիմ վկայեալ է ի յովից գիտնոց»¹⁸: Չնայած դրան, Ղ. Ալիշանը համամիտ չէր Բայրոնի պօէմում տեղ գտած թախծամոլութեան ու մելամաղձութեան արտայայտութիւններին եւ իր թարգմանութեան մէջ դրանք կամ զեղչել է, կամ իր վերաբերմունքն է ցոյց տուել ծանօթագրութիւնների եւ մեկնաբանութիւնների միջոցով: Այնուհետեւ այդ թարգմանութիւնը նոյնութեամբ վերահրատարակուել է 1889-ին, 1891-ին եւ 1901-ին: Նշենք նաեւ, որ այս պօէմին, բացի Ղ. Ալիշանից, անդրադարձել են եւս հինգ հայ թարգմանիչ՝ Վ. Անտոնեանը, Լեւոնցը, Յ. Միրզախանը, Յ. Թումանեանը եւ Հ. Սեւանը:

Ինչպէս արդէն նշել ենք, 1870-ին Մխիթարեանները հրատարակում են «Լորդ Բայրոնի հայերէն վարժութիւնները եւ բանաստեղծութիւնները» (անգլերէն եւ հայերէն) ժողովածուն, որտեղ գրեթէ նոյնութեամբ (փոխուել են հատ ու կենտ բառեր) արտատրպուել են 1852-ին հրատարակուած «Ծաղկափաղ փերթոպաց անգ-

16 ԲԱՅՐՈՆ, *Երկերի ժողովածու*, «Հայաստան», Երեւան 1965, 99-275:

17 LORD BYRON, *Childe Harold's Pilgrimage*, Canto the fourth, Venice, In the Island of S. Lazarus, 1860. – ԲԱՅՐՈՆ, «Իտալիա», Թարգմ. Ղ. Ալիշան, Վեներիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1860:

18 Անդ, Ագդ:

դիացւոց» ժողովածուում զետեղուած՝ Բայրոնին վերաբերող նիւթերն ամբողջութեամբ, որոնց աւելացուել է ընդամէնը չորս բանաստեղծութիւն՝ «Ի մահ օրիորդի միոյ քնոորդի քերթողին եւ սիրելի յոյժ մմա» («On the Death of a Young Lady»), «Առ Դուսնս Տորսէդ» («To the Duke of Dorset»), «Արտասուք» («The Tear») եւ «Յետին տողֆ Պայոլընի» («On This Day I Complete My Thirty-sixth Year»)։ Դրանցից առաջին երեքը «Պարապութեան ժամեր» շարքից են։ Թէեւ այդ ժողովածուում զետեղուած բանաստեղծութիւնների թարգմանիչները նոյնպէս նշուած չեն, վստահօրէն կարող ենք պնդել, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը, ընդ որում, վերջին բանաստեղծութեան թարգմանութեան տեքստը բառացիօրէն նոյնն է, ինչ որ տպագրուած է 1905-ին «Բազմավէպ»ում, որտեղ թարգմանիչը նշուած է։ Վերոյիշեալ ժողովածուն նոյնութեամբ արտատպուել է 1907-ին։

1880-ին Մխիթարեանները հրատարակում են օտարազգի բանաստեղծների ստեղծագործութիւններից կատարուած թարգմանութիւնների ժողովածուի երկրորդ մասը, որտեղ «Նկարագրակամք» խորագրի տակ զետեղուել են նաեւ Բայրոնի երկու բանաստեղծութիւնները՝ «Գերեզմանք համաբերդաց յիտալիայ» եւ «Յլամարտ ի Սպանիա» վերնագրերով¹⁹։ Այդ ժողովածուն նոյնութեամբ վերահրատարակուել է 1883-ին։ Բացի դրանից, նոյն 1880-ին հրատարակուել է այդ ժողովածուի համառօտ տարբերակը, որի մէջ տեղ է գտել Բայրոնի վերոյիշեալ բանաստեղծութիւններից միայն առաջինը²⁰, որը մի հատուած է Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը» պօէմի չորրորդ (54-60 իննեակներ) նուագից։ Չնայած վերոյիշեալ ժողովածուներում թարգմանիչները նշուած են հաւաքական անունով (Մխիթարեան միաբանից), սակայն ակնյայտ է, որ Բայրոնի այդ բանաստեղծութիւնը թարգմանել է Ղ. Ալիշանը (տե՛ս 1860-ի հրատարակութեան ԾԴ-4 իննեակները)։

«Բազմավէպ» 1905-ի երրորդ համարում լոյս է տեսնում Բայրոնի «Յետին տողֆ Պայոլընի» («On This Day I Complete My Thirty-Sixth Year») բանաստեղծութիւնը (թարգմ. Ղ. Ալիշան), որի վերնագրից անմիջապէս յետոյ թոյլ է տրուել անճշտութիւն՝ գրուել են «ի

¹⁹ Ծաղկաբաղ հատուածի յօտարազգի մատենագրաց, քարգմ. Մխիթարեան միաբանից, մասն երկրորդ. «Քերթուածէ», Վնենտիկ, ի վանս Ս. Ղազարու, 1880, 132-136:

²⁰ Համառօտ ծաղկաբաղ հատուածոց ի քերթութեանց օտարազգի մատենագրաց, Վնենտիկ, Վանք Մխիթարեանց, 1880, 78-80:

փետրուարի, 1824» բառերը (ի դէպ, այդ անճշտութիւնը բացակայում է բանաստեղծութեան 1870-ի, այսինքն՝ հայերէն առաջին հրատարակութեան մէջ, որտեղ նշուած է՝ «ի յունուար, 1824»։ Բացի դրանից, բանաստեղծութիւնից անմիջապէս յետոյ նշուում է, որ այն անտիպ թարգմանութիւն է։ Դա նոյնպէս անճշտութիւն է, քանի որ այն, ինչպէս արդէն նշել ենք, դեռեւս 1870-ին տեղ է գտել Մխիթարեանների հրատարակած «Լորդ Բայրոնի հայերէն վարժութիւնները եւ բանաստեղծութիւնները» (անգլերէն եւ հայերէն) ժողովածուում։ Ինչպէս յայտնի է, սա Բայրոնի վերջին բանաստեղծութիւնն է, որը բանաստեղծը գրել է իր ծննդեան երեսունվեցերորդ տարեդարձի օրը՝ 1824-ի յունուարի 22-ին։ Բայրոնի մահուան 100-ամեակի կապակցութեամբ՝ «Բազմավէպ»ի 1924-ի ապրիլեան համարում մի անգամ եւս հանդիպում ենք նրա վերջին բանաստեղծութեանը՝ Ղ. Ալիշանի թարգմանութեամբ²¹։ Այստեղ արդէն ուղղուած են հանդէսի 1905-ի երրորդ համարում տեղ գտած անճշտութիւնները։ Նշուում է, որ բանաստեղծութիւնը գրուել է «ի յունուար, 1824» եւ հայերէն տպագրուել է դեռեւս 1870-ին Վենետիկում։ Մահուանից ընդամէնը երեք ամիս առաջ գրուած այս բանաստեղծութիւնը (Բայրոնը մահացել է 1824-ի ապրիլի 19-ին) լի է անսահման թախիծով ու տխրութեամբ։ Սակայն այդ տխուր տողերի միջից մեր առջեւ վեր է յառնում Բայրոնին իր համարձակ ոգով, ով պատրաստ է իրեն զոհել յանուն Յունաստանի։ Այս բանաստեղծութեան մէջ Բայրոնը կարծես թէ մարգարէաբար գուշակում է իր մօտալուտ մահը։

Ի դէպ, Բայրոնի վերջին՝ «Այսօր լրանում է իմ երեսունվեցերորդ տարին» բանաստեղծութեան թարգմանութեամբ հանդէս են եկել տարբեր թարգմանիչներ։ Այսպէս, այս բանաստեղծութեան հայերէն թարգմանութիւնը տպագրուել է «Ազգասէր»ում (ստորագրուած է՝ Օ. Ֆ. 1847, հտ. Դ, № 91, էջ 152), «Մասեաց աղանի» (թարգմանիչը չի նշուում, 1860, № 12, էջ 197), «Մուրմ»ում (թարգմ. Հ. Մասեհեան 1905, № 5, էջ 65-66) եւ «Արագած»ում (ստորագրուած է՝ Լիւսի, 1926, № 11, էջ 7)։

Ալիշանի ստեղծագործութեան վրայ Բայրոնի քնարերգութեան թողած ազդեցութեանը, նրա բայրոնեան թարգմանութիւններին անդրադարձել են թէ՛ հայ, թէ՛ օտարագրիչ հեղինակներ։ Այդ առումով յիշատակենք որոշ աշխատանքներ։

21 ԲԱՅՐՈՆ, Այսօր լիմիմ ամաց երեսնից եւ վեցից (Յետիմ Տողժ Պայրըմի), քարգմ. Հ. Ղեւոնդ Ալիշան, Ի Բազմավէպ, 1924, № 4, 119:

Այսպէս, Հայ մշակոյթի երախտաւոր, բանաստեղծ, բանասիրական արժէքաւոր ուսումնասիրութիւններին հեղինակ Եղիա Փէչիկեանը (1895–1964) 1924–ին «Բազմավէպ»ում հրատարակած «Լորտ Պայրըն հայոց մէջ» յօդուածում²² խօսում է նաեւ Բայրոնի եւ Ալիշանի մասին, զուգահեռներ անցկացնում նրանց ստեղծագործական գործունէութեան միջեւ եւ նշում առկայ զուգադիպութիւնները. «Հոս սակայն շարք մ'ունիմք գեղեցիկ զուգադիպութեանց կամ զուգակշռի եզրներու երկու համեմարներու միջեւ որոնք մոյմ դարու արեգակներ են: Նախ անոնց դիրքը մոյմ դարուն մէջ. Երկուքն ալ գերահերոսակ համեմարներ. յետոյ անոնց փոխադարձ պանդխտութիւնը. քո'ղ խօսի իմն Ալիշան. «(ի Վենետիկ) յորում եւ մասն ինչ երգոցս (Իտալիա) յօրինեալ է ի բանաստեղծէն եւ Գլիովի'ն ի կղզւոջ մենաստանի՝ որում մա յաճախ այց ելանէր՝ մինչդեռ պանդուխտ իւր (Հարոլդ ասպետ – Childe Harold) քափառէր տակաւին յանդերձար հրապարակս մտաց իւրոց այս ամենայն... մերս իսկ մտդեհութիւն (Հ. Ալիշան ինքնին կ'ակնարկէ նմանութիւնը) ի հայրենիս անդր Բերքողին»: Ուրեմն ինչ որ Լորտ Պայրըն պանդխտութեամբ ի Վենետիկ, Ս. Ղազարու մէջ կը շարադրէր, մոյմը Հ. Ալիշան յանգդիայ, ի Լոնտրա իր պանդխտութեան մէջ կը հայացներ»²³, – գրում է Հ. Փէչիկեանը: Յօդուածագիրը նշում է նաեւ յաջորդ զուգադիպութիւնը, դա «մոյմ մեծ Բերքողներու փոխադարձ հայ եւ անգղիերէն լեզուները սորվիլն է եւ երկուքին ալ փոխադարձ դժուարութիւնը. Հ. Ալիշան կ'ըսէ. «ի հայրենիս անդ Բերքողին ... գտադուռն օտարութեանս այսպիսեալ իմն կամեցայ սփոփել կամ տանջել ոչ դիրաթափ քարգմանութեամբ». հոս ալ մոյմպէս Հ. Ալիշան կը նշարէ զուգադիպութիւնը «այնպիսի իմն հնարս հնարեալ եւ հեղինակին երբեմն արկանէր զանձն ի փորձ եւ ի տոյժ ուսանել զմերս հայերէն դժուարագիտ քարքառ ի մերում իսկ դրան վաճաք», ինչ որ Լորտ Պայրըն ալ յայտնապէս»²⁴ նկատում է. «Իմ համոզմամբ հայոց լեզուն <...> դժուարին է, բայց ոչ անյաղթահարելի <...>: Կը շարունակեմ ուսումնառութիւնս»²⁵: Հայ գրող, Թարգմանիչ Խաչիկ Դաշտենցը (1910–1974) իր աշխատութեան²⁶ մէջ առանձին գլուխ է յատկացրել Բայրոնի ազատա-տենչ քնարերգութեան խանդավառ եր-

22 Փէչիկեան, Հ. Եղիա, Լորտ Պայրըն հայոց մէջ, ի Բազմավէպ, 1924, № 4, 157–160:

23 Անդ, 158–159:

24 Անդ, 159:

25 MOORE, Th., *The Life, Letters and Journals of Lord Byron*, London, John Murray, 1908, 333.

26 Տե՛ս ԴԱՇՏԵՆՑ ԽԱՉԻԿ, *Բայրոնը եւ հայերը*, Հայպետհրատ, Երեւան 1959:

կըրպագու 2. Ալիշանին (տաս-նեօթերորդ գլուխը, որը կրում է «Բայրոնը եւ Ալիշանը» խորա-գիրը): Ըստ Դաշտենցի, որքան էլ Բայրոնը հայ ժողովրդի ճակատագրով տոգորուած բարեկամ լինէր, «այնուամենայնիւ նա կարբոնար էր եւ նրա շատ երկերը միանգամայն խորթ, անհասկանալի եւ նոյնիսկ դատապարտելի էին հայ կաթոլիկ միաբանների համար»²⁷: Սակայն, ինչպէս իրաւացիօրէն նշում է Խ. Դաշտենցը, որոշ միաբաններ, եւ առաջին հերթին բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանը, համակրանք տածելով իտալական ազգային ազատագրական շարժումների նկատմամբ եւ «ճայնակցելով դարի առաջաւոր մտքերին ու ձգտումներին», կարողացան վեր բարձրանալ կղերական միջավայրից «մինչեւ կարբոնարիստ Բայրոնի հայրենասիրական եւ մարդասիրական լայն գաղափարներով տոգորուած երկերը հասկանալու եւ գնահատելու աստիճանը»²⁸: Իր աշխատութեան մէջ Խ. Դաշտենցն անդրադառնում է «Ալիշանին Բայրոնի հետ կապող» կարեւոր օղակներին: Նախ, ինչպէս նշում է Դաշտենցը, Ղեւոնդ Ալիշանը ոգեւորուել է վենետիկեան յեղափոխութեամբ, յիշել իր հարազատ ժողովրդի ճակատագիրը եւ իր հայրենասիրական «բանաստեղծութիւնների զգալի մասը յօրինել է իտալական շարժումների ազդեցութեան տակ»: Իսկ «այդ շարժումների հետ ժամանակին մեծ առնչութիւն» էր ունեցել Բայրոնը եւ միանգամայն բնական է, որ «նրա որոշ երգերը պետք է ոգեւորելին Ալիշանին եւ շարժէին նրա հիացմունքը»²⁹: Երկրորդ, Բայրոնի բանաստեղծութիւններում խորապէս զգացւում էր տարագիր բանաստեղծի շունչը: Իսկ Ալիշանը, ում «հոգին մաշուում էր Հայաստանի կարօտից», ինչպէս եւ Բայրոնը նոյնպէս տարագիր էր եւ նրա նման դեգերում էր օտար երկրների տակ»³⁰: Երրորդ, Բայրոնին եւ Ալիշանին մերձեցնող օղակը «դա նրանց բանաստեղծական տարբերի նմանութիւնն է»³¹: Իրոք, երկուսն էլ օժտուած էին վառ երեւակալութեամբ, յափշտակուած էին բնութեան գեղեցկութեամբ, որոնց արտացոլումը մենք տեսնում ենք նրանց երգերի մէջ: Եւ, վերջապէս, չորրորդ, «Ալիշանին Բայրոնին կապող օղակներից մէկը նրա համայնապարփակ միտքն է, որը նրան խիստ սահմանագծում էր կղերական միջավայրից»³²:

27 Անդ, 131:

28 Անդ, 132:

29 Անդ, 133:

30 Անդ, 138:

31 Անդ, 139:

32 Անդ, 140:

Նիւ Եորքում անգլերէն լոյս տեսնող «Արարատ» հասարակական-քաղաքական, գրական-գեղարուեստական եռամսեայ հանդէսի 1967-ի ամառային համարում տպագրւում է Աննա Պաուլուչիի «Հայաստան՝ Վեներտիկի ջրերի վրայ»³³ յօդուածը. որտեղ հեղինակը մանրամասն քննարկում է Բայրոնի եւ Միխիթարեանների գիտական համագործակցութիւնը, ընդգծում, որ «Բայրոնը «Զայլդ Հարուդի» չորրորդ նուագը գրել է Ս. Ղազարում, ծովախորշին նայող զառիթափում գտնուող ձիթեմիների տակ, որտեղ նստում էր ժամերով՝ գրուցելով վանականների հետ կամ էլ հիւանալով տեսարանով»³⁴, եւ անդրադառնում է այն փաստին, որ Բայրոնի այլ բանաստեղծութիւնների հետ մէկտեղ վերոյիշեալ պօսմի այդ նուագը հայերէն է թարգմանել Ղեւոնդ Ալիշանը:

Հայաստանի ազգային պատկերասրահում պահպանւում է հայ ժողովրդի մեծ զաւակ, աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու (1817-1900) «Բայրոնի այցը Միխթարեաններին Սր. Ղազար կղզում» նկարը, որտեղ Հ. Այվազովսկին պատկերել է, թէ ինչպիսի ջերմութեամբ են դիմաւորում Ս. Ղազար եկած ու ափ իջած անգլիացի մեծ բանաստեղծին ու ազատութեան մեծ երգչին Միխթարեան միաբանութեան աւագ հայերը՝ Ղեւոնդ Ալիշանի գլխաւորութեամբ: Չնայած Բայրոնի՝ Սուրբ Ղազար այցելութեան ժամանակ Ղ. Ալիշանը դեռ չէր ծնուել, բայց ինչպէս իրաւացիորէն նկատում է հայ արուեստի անխոնջ մշակ, «թանգարանի զինուոր» (Մարտիրոս Սարեանի բնութագրմամբ) Շահէն Խաչատրեանը, «նկարիչը յատուկ նպատակով» է պատկերել նաեւ Ժ. դարի «մեծ հայորդի, գիտնական եւ քանաստեղծ Ղեւոնդ Ալիշանին»³⁵, դա ոչ թէ ժամանակավրիպում է, այլ «սեփական մտայնացում» մէկ նկարի մէջ խտացել հայ տարբեր սերունդների ներկայացուցիչներին, իր եւ նրանց ազատաբաղձ իդէալը»³⁶, քանի որ «հայ ժողովուրդը սերնդէսերունդ (ոչ միայն բայրոնեան շրջանում) երազել է մայր երկրի ազատագրումը, կոփուել հայ-

33 PAOLUCCI ANNE, *Armenia on the Waters of Venice*, in "Ararat", 1967, № 31, Summer, 3-7.

34 Անդ, 7:

35 ХАЧАТРЯН ШАЭН, Айвазовский (1817-1900): Апостол мира и гуманизма (К 190-летию со дня рождения художника; на русском и армянском языках), Принтинфо, Ереван 2008, 79.

36 Անդ:

րենասիրական ոգով: Ալիշանը այդ ոգու խորհրդանիշներից է, եւ նսւ
ընդգրկուել է Այվազովսկու մտայղացման մէջ»³⁷:

*Եզրափակելով՝ նշենք կեանքի վերջին տարում հայ երիտա-
սարդութեանն ուղղուած Ալիշանի կոչն ու պատգամը. «Շրջահա-
յեա՛ց եղէք, սիրեցէ՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը եւ սիրեցէ՛ք
միմեանց»³⁸: Մեծ Նահապետի այդ յորդորն այսօր էլ շատ արդիա-
կան է:*

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐԵԱՆ

37 ԽԱԶԱՏՐԵԱՆ ՇԱՀԷՆ, *Թանգարանի գիմուորը*, Փրինթինթոն, Երեւան 2007, վերատպուած՝ 2014, 94:

38 ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԻԵՏԻՔ, *Ղեւոնդ Ալիշան, Ալիշանը ժամանակակիցների
յուշերում*, Ժողովածու, «Հայաստան» հրատ., Երեւան 1974, 223:

Summary

BYRON AND ALISHAN

ANAHIT BEKARYAN

KEY WORDS: Byron, Byronism, Alishan, Romanticism, Mekhitarists, “Childe Harold’s Pilgrimage”, the first translator, Armenian poetry, English poetry, love of freedom.

Ghevond Alishan, the father of Armenian poetry, was Byron’s first translator, who considered Byron to be the greatest poet of his epoch. Alishan had his translations of Byron’s poetry published in the periodicals of the Mekhitarist Congregation. In 1852, “*Beauties of English Poets*” comprising Byron’s poetry got published in Venice. It was followed in 1870 by “*Selected poetry: Lord Byron’s translations of Armenian literature*” comprising Alishan’s translations of Byron’s poems. As the fourth canto from *Childe Harold’s Pilgrimage – Italy* was published in Venice, in 1860, one could also find there Alishan’s Armenian translation of the same canto later republished in 1884, 1891 and 1901. The Armenian and foreign authors who studied Byron’s work made a reference to the huge impact Byron’s poetry had on Alishan’s work and his translations.